ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ԳՀ-2019/1-6
«ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան

12-ը մարտի 2019թ.
ժամը 14^{30}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
Կոմիտեի նախագահի տեղակալ Ս.Աթանեսյան
Անդամներ՝
Կոմիտեի գույքի գրանցման և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Վ.Ասատրյան (գնահատող),
Կոմիտեի գույքի գրանցման և հաշվառման բաժնի առաջատար մասնագետ Գ.Դավթյան (բացող)
Կոմիտեի տնտեսական բաժնի պետ Ռ. Արշակյան (բացող)
Քարտուղար՝
Կոմիտեի աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Պետրոսյան

«ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

---

1. Հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացության քննարկում և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացության քննարկում և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

Քանի որ «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զաղեցրած մասնակիցը գրավոր դիմում էր ներկայացրել հանձնաժողովին՝ հայտարարելով պայմանագիր կնքելուց հրաժարվելու իր որոշման մասին, վերոգրյալ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ՀՀ պետական եկամուտների կոմիտե 05.03.2019թ-ին հարցում էր ուղարկվել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկատվության տրամադրման նպատակով:

1.1 ***ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված, 11.03.2019թ-ին տրամադրված եզրակացության համաձայն մասնակիցը՝ «Պոլիգոն» ՍՊԸ-ն, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 15000 դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ:***

1.2 Հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվությունը՝ հանձնաժողովը որոշեց «Պոլիգոն» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջինիս հայտարարել ընտրված(հաղթող) մասնակից և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի հաստատելու մասին.

2.1 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի նիստին ներկա անդամների ստորագրությունը

Նախագահ՝

---------- **Ս. Աթանեսյան**

Անդամներ՝

---------- **Վ. Ասատրյան**

---------- **Գ. Դավթյան**

---------- **Ռ. Արշակյան**

Քարտուղար՝

---------- **Ա. Պետրոսյան**